

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/3

13 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Լյուդմիլա Սահարյանի 15.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 123 և 23.09.2015 թ-ի թիվ 450 որոշումների, ինչպես նաև հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին 08.10.2015 թ-ի թիվ 031250 որոշման դեմ:

Քաղաքացի Լյուդմիլա Սահարյանի բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015թ.-ին կայացվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 123 որոշումը (այսուհետ՝ թիվ 123 որոշում), որի պատճառաբանական մասում նշված է, որ 27.08.2015 թ.-ի դրությամբ Ա/Ձ Լյուդմիլա Սահակյանի չկատարած հարկային պարտավորությունները կազմում են 1.107.648 դրամ, որից եկամտային հարկի գծով 1.107.648 դրամ, որից ապառք 713.115 դրամ, տույժ 394.533 դրամ, որը ենթակա է գանձման:

Այսուհետև 23.09.2015թ.-ին կայացվել է թիվ 450 որոշումը (այսուհետ՝ թիվ 450 որոշում), որի համաձայն 23.09.2015 թ.-ի դրությամբ Ա/Ձ Լյուդմիլա Սահարյանի չկատարած հարկային պարտավորությունները կազմում է 1.136.529 դրամ, որից ապառք 713.115 դրամ, տույժ 423.414 դրամ, որը ենթակա է գանձման:

08.10.2015թ.-ին ՀՀ ՖՆ աշխատակիցների կողմից կայացվել է հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 031250 որոշումը (այսուհետ թիվ 031250 որոշում), որով որոշվել է Ֆ/Ա Լյուդմիլա Սահակյանին պատկանող բանկային հաշվեհամարների, ինչպես նաև դրամարկղի վրա արգելանք դնել:

Թիվ 123 և 450 որոշումները, հետևաբար նաև թիվ 031250 որոշումը հանդիսանում են առոչինչ վարչական ակտեր, քանի որ այդ ակտերով դրանց հասցեատիրոջ վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն: Մասնավորապես, եկամտային հարկի գծով չկատարած հարկային պարտավորության ոչ իրավաչափությունը կայանում է նրանում, որ Լյուդմիլա Սահարյանը, ըստ էության, ժամանակին (կանխավճարային կարգով) կատարել է իր բոլոր հարկային պարտավորությունները, որոնք հիմնավորվում են համապատասխան վճարման հանձնարարագրերով: Վճարման հանձնարարագրերի ցանկը և պատճենները ներկայացվում են կից: Իսկ նշված պարտականության ոչ իրավաչափ լինելը ակնհայտ է, քանի որ բոլոր փոխանցված գումարների մասին հարկային մարմինը տեղեկացված է, և այդ գումարները վերջինիս կողմից ընդունված են: Թիվ 123 և 450 որոշումներով առաջադրված պարտականության ակնհայտ ոչ իրավաչափ լինելու ամենավառ ապացույցն է հանդիսանում այն, որ ՀՀ ՖՆ մաշտոցի հարկային տեսչության կողմից տրամադրված ֆիզ. անձ Լյուդմիլա Սահարյանի 01.01.2012-05.10.2015 թ.թ. բյուջե վճարումների գծով փոխադարձ հաշվարկների ակտի համաձայն (ներկայացվում է կից) ֆիզ. անձ Լյուդմիլա Սահարյանը չկատարած հարկային պարտավորություններ չունի, այլ հակառակը ունի 1.064.353 դրամի գերավճար: Ավելին, նշված

տեղեկությունները այն մասին, որ Լյուդմիլա Սահարյանը իր բոլոր հարկային պարտավորությունները կատարել է ժամանակին, լրացուցիչ գրությունների ձևով հայտնվել է հարկային մարմիններին կցված լինելով բոլոր վճարման հանձնարարագրերը, որոնք սակայն հաշվի չեն առնվել թիվ 123 և 450 որոշումները կայացնելիս:

Հարկ է նշել նաև, որ թիվ 123 և 450 որոշումները, հետևաբար նաև թիվ 031250 որոշումը կայացվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով: Այսպես, խախտվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 16.1 հոդվածների պահանջները, ըստ որոնց հարկային մարմինը պարտավոր էր հաշվառել և հաշվի առնել հարկ վճարողի Լյուդմիլա Սահարյանի կողմից ներկայացված բոլոր տեղեկություններն իր հարկային պարտավորությունների և դրանց վճարումների վերաբերյալ, որոնց պահպանման արդյունքում թիվ 123 և 450 որոշումները ենթակա չէին լինի կայացման:

Խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածների, 55-րդ հոդվածի 4-րդ մասի դ) ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ գլխով, 62-րդ հոդվածի 1-ին մասի դ) ենթակետով և 4-րդ մասով, 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 123, թիվ 450 և թիվ 031250 որոշումները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Լյուդմիլա Սահարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 27.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները եկամտային հարկի գծով կազմում են 1.107.648 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 125 որոշումը Ա/Ձ Լյուդմիլա Սահարյանից 1.107.648 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Այնուհետև ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 23.09.2015 թ-ին կայացվել է թիվ 450 որոշումը, որի համաձայն 23.09.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Լյուդմիլա Սահարյանի չկատարված հարկային պարտավորությունները եկամտային հարկի գծով կազմում են 1.136.529 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ 08.10.2015 թ-ին ընդունվել է հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 031250 որոշումը, որի համաձայն արգելանք է դրվել Ա/Ձ Լյուդմիլա Սահարյանի գույքի վրա:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Լյուդմիլա Սահարյանը 2012 թ-ի նոյեմբեր ամսից գույքը վարձակալության տալու դիմաց ստացված եկամուտներից պետական բյուջե է վճարել եկամատահարկ և ներկայացրել է հաշվետվություններ: Լյուդմիլա

Սահարյանի կողմից վճարված եկամտահարկի գումարները հաշվառվել են Մաշտոցի ՀՏ-ում թղթային կարգով վարվող անձնական հաշվի քարտում:

14.03.2014 թ-ին Լյուդմիլա Սահարյանը ստացել է հարկ վճարողի հաշվառման համար, որի հետևանքով «Հարկատու 3» համակարգում նույն ամսաթվով արտացոլվել է եկամտային հարկի անձնական հաշվի քարտը, որում, սակայն, չեն ներառվել նրա կողմից նախկինում կատարված վճարումները: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 125 և 23.09.2015 թ-ի թիվ 450 որոշումները կայացվելու համար:

Նշվեց նաև, որ Լյուդմիլա Սահարյանը, Մաշտոցի ՀՏ պետին 29.09.2015 թ-ին հասցեագրված գրությամբ, խնդրել է տրամադրել տեղեկանք 01.01.2012 թ-ից մինչև 05.10.2015 թ-ն ընկած ժամանակաշրջանում գույքի վարձակալության դիմաց ստացված եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտային հարկի գծով պարտավորությունների վերաբերյալ: Մաշտոցի ՀՏ կողմից կատարվել է 01.01.2012 թ-ից մինչև 05.10.2015 թ-ն ընկած ժամանակաշրջանի բյուջե վճարումների գծով փոխադարձ հաշվարկների ստուգում, որի արդյունքում 05.10.2015 թ-ին կազմվել է «Փոխադարձ հաշվարկների ակտ»-ը: Վերջինիս համաձայն Լյուդմիլա Սահարյանի մոտ առկա է 1.064.353 դրամի գերավճար:

Քննարկվող դեպքում վերոգրյալ գանձման որոշումները կայացվելու դրությամբ եկամտային հարկի գծով պարտավորությունների առկայությունը պայմանավորված է եղել թղթային կարգով հաշվառվող եկամտային հարկի գումարները «Հարկատու 3» համակարգում բացված եկամտային հարկի անձնական հաշվի քարտում չներառվելու հանգամանքով: Իրականում, համաձայն Մաշտոցի ՀՏ 05.10.2015 թ-ի «Փոխադարձ հաշվարկների ակտ»-ի, 01.01.2012 թ-ից մինչև 05.10.2015 թ-ն ընկած ժամանակաշրջանում Լյուդմիլա Սահարյանի մոտ առկա է 1.064.353 դրամի գերավճար:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Լյուդմիլա Սահարյանի բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 123 և 23.09.2015 թ-ի թիվ 450 որոշումները, ինչպես նաև հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին 08.10.2015 թ-ի թիվ 031250 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.Մ. ԻՐԻՈՒՅԱՆ